ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ձորագետ համայնք, հասցե հ. Ձորագետ 1փ. 41, հեռախոս 093-33-88-09
էլ. փոստ dzoraget.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«15» հունվարի 2020 թվականի N 05-Ա

«ԹՈՒՖԵՆԿՅԱՆ ՀՈՍՓԻԹԱԼԻԹԻ» ՍՊԸ-ԻՆ ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով , համաձայն Ձորագետ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 34-Ն որոշման հավելվածի 1-ին կետի 10-րդ ենթակետի, հիմք ընդունելով «Թուֆենկյան Հոսփիթալիթի» ՍՊԸ-ի 2020 թվականի հունվարի 14-ի հայտը,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ.

1. «Թուֆենկյան Հոսփիթալիթի» ՍՊԸ-ին /ՀՎՀՀ00066784/ տալ Ձորագետ համայնքի 1 փողոց 127 հասցեում գտնվող 198քմ մակերեսով հյուրանոցում (հիմնական շինություն) հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն: 2020թվականի հունվարի 1-ից մինչև 2020թվականի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածի համար:
2. Աշխատակազմի առաջատար մասնագետին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված գործունեության թույլտվության համար նախատեսված տեղական տուրքերի գանձումը և սահմանված կարգով տրամադրել թույլտվությունը հավաստող փաստաթուղթը:
3.. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ
2020 թ. հունվարի 15
հ. Ձորագետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ձորագետ համայնք, հասցե հ. Ձորագետ 1փ. 41, հեռախոս 093-33-88-09
էլ. փոստ dzoraget.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«15» հունվարի 2020 թվականի N 06-Ա

«ԹՈՒՖԵՆԿՅԱՆ ՀՈՍՓԻԹԱԼԻԹԻ» ՍՊԸ-ԻՆ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ և 4-րդ կետի և Ձորագետ համայնքի ավագանու 2019թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 34-Ն որոշման հավելվածի՝ 1-ին կետի 7-րդ ենթակետի, հիմք ընդունելով «Թուֆենկյան Հոսփիթալիթի»ՍՊԸ-ի 2020 թվականի հունվարի 14-ի հայտը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ.

1 «Թուֆենկյան Հոսփիթալիթի» ՍՊԸ-ին /ՀՎՀՀ00066784/ տալ Ձորագետ համայնքի 1 փողոց 127 հասցեում գտնվող 30քմ մակերեսով հյուրանոցի տարածքում (հիմնական շինություն) ծխախոտի վաճառքի թույլտվություն՝ 2020թվականի հունվարի 1-ից մինչև 2020թվականի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածի համար:
2. Աշխատակազմի առաջատար մասնագետին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված գործունեության թույլտվության համար նախատեսված տեղական տուրքերի գանձումը և սահմանված կարգով տրամադրել թույլտվությունը հավաստող փաստաթուղթը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ
2020 թ. հունվարի 15
հ. Ձորագետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ձորագետ համայնք, հասցե հ. Ձորագետ 1փ. 41, հեռախոս 093-33-88-09
էլ. փոստ dzoraget.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«15 » հունվարի 2020 թվականի N 07-Ա

«ԹՈՒՖԵՆԿՅԱՆ ՀՈՍՓԻԹԱԼԻԹԻ» ՍՊԸ-ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ ՖԻՐՄԱՅԻՆ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 15-րդ կետով՝, ՀՀ կառավարության 2012թ. նոյեմբերի 8-ի N1617-Ն որոշմամբ հաստատված կարգի 5-րդ կետով, հիմք ընդունելով «Թուֆենկյան Հոսփիթալիթի» ՍՊԸ-ի 2020 թվականի հունվարի 14-ի հայտը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ.

1. Ձորագետ համայնքի վարչական տարածքի 1 փողոց 127 հասցեում գործող «Թուֆենկյան Հոսփիթալիթի» ՍՊԸ-ի /ՀՎՀՀ00066784/ հայտը բավարարել և նրան տալ ՀՀ Լոռու մարզի Ձորագետ համայնքի անվանումը 2020թվականի ընթացքում օգտագործել ֆիրմային անվանման մեջ:
2. Աշխատակազմի առաջատար մասնագետին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված գործունեության թույլտվության համար նախատեսված տեղական տուրքերի գանձումը և սահմանված կարգով տրամադրել թույլտվությունը հավաստող փաստաթուղթը:
3.. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ
2020 թ. հունվարի 15
հ. Ձորագետ